

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Կառավարության և Ուկրաինայի Կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ուկրաինայի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով Կողմերի միջև գաղթերի (միգրացիայի) նշանակությունը և մասշտաբները,

ձգտելով Կողմերի տարածքներում քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության համակողմանի զարգացմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է այն անձանց (այսուհետ՝ աշխատողներ) և նրանց ընտանիքների անդամների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության կամ Ուկրաինայի քաղաքացի են կամ մշտական բնակության վայր ունեն Կողմերից որևէ մեկի տարածքում (այսուհետև՝ մեկնման Կողմ) և իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են սեփականության բոլոր ձևերի ձեռնարկություններում, հիմնարկություններում, կազմակերպություններում (այսուհետ՝ գործատուներ), մյուս Կողմի տարածքում (այսուհետ՝ աշխատանքի տեղավորման Կողմ)՝ նրա օրենսդրությանը համապատասխան:

### Հոդված 2

Սույն Համաձայնագիրն իրականացնող Կողմերին ներկայացնելու համար լիազորված մարմիններ (այսուհետ՝ լիազորված մարմիններ) են հանդես գալիս՝

հայկական Կողմից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը,

ուկրաինական Կողմից՝ Ուկրաինայի աշխատանքի նախարարությունը:

Լիազորված մարմիններն իրավունք ունեն ներգրավել Կողմերի իրավասու մարմիններին սույն Համաձայնագրից բխող հարցերի լուծման համար:

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված բոլոր հարցերը Կողմերի լիազորված մարմինների միջև լուծվում են փոխադարձ խորհրդակցությունների

միջոցով: Այդ նպատակով նրանք կարող են ստեղծել երկկողմ աշխատանքային խմբեր:

### **Հոդված 3**

Սույն Համաձայնագրի շրջանակներում մի Կողմի աշխատողները կարող են աշխատանքային գործունեություն իրականացնել մյուս Կողմի տարածքում՝

1) գործատուի և աշխատողի միջև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի (կոնտրակտի) հիման վրա,

2) երկու Կողմերի տնտեսական գործունեության սուբյեկտների միջև կնքված պայմանագրի հիման վրա, որի նպատակն է աշխատանքի տեղավորման Կողմի տարածքում իրականացնել որոշակի ծավալի աշխատանքներ կամ ծառայություններ:

### **Հոդված 4**

1. Աշխատանք ստանալու համար աշխատողներին անհրաժեշտ է աշխատանքի տեղավորման Կողմի աշխատանքի տեղավորման համապատասխան մարմնի կողմից աշխատանքի տեղավորվելու թույլտվություն՝ տրված այդ Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

2. Աշխատանքի տեղավորման թույլտվությունը տրվում է որոշակի գործատուի մոտ աշխատանքներ կատարելու ժամկետի համար:

3. 1-ին կետում նշված թույլտվությունը կտրվի պայմանով, որ աշխատողը չգրադվի որևէ այլ վճարովի գործունեությամբ, բացի նրանից, որի համար նրան տրվել է թույլտվությունը:

Եթե հաստատվի, որ աշխատողը զբաղված է այլ վճարովի գործունեությամբ կամ ինքնակամորեն փոխել է գործատուին, ապա թույլտվությունը չեղյալ կհամարվի:

4. Աշխատանքային պայմանագիրը (կոնտրակտը) ստորագրելիս աշխատողը պարտավորություն է ստանձնում, որ ինքը աշխատանքի տեղավորման Կողմի տարածքում սահմանված ժամանակից, որի համար նա թույլտվություն է ստացել, ավելի երկար չի մնա:

5. Աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները շարունակելու համար գործատուին անհրաժեշտ է սահմանված կարգով լուծել աշխատանքի թույլտվության երկարաձգման հարցը նրա գործողության ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

### **Հոդված 5**

Ազգային աշխատաշուկաներում իրադրության փոփոխման դեպքում Կողմերը կարող են մյուս Կողմի աշխատողներին աշխատանքի ընդունելու սահմանափակումներ մտցնել:

### **Հոդված 6**

Տարիքը, որից սկսած թույլատրվում է աշխատողներին աշխատանքի ընդունել, սահմանվում է աշխատանքի տեղավորման Կողմի օրենսդրությամբ:

### **Հոդված 7**

Կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է (առանց օրինականացման) վկայագրերը, կրթության մասին վկայականները, որակավորում, կարգ և կոչում շնորհելու մասին համապատասխան փաստաթղթերը և աշխատանքային գործունեություն իրականացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերը և մեկնման Կողմի տարածքում սահմանված կարգով վավերացված նրանց թարգմանությունները աշխատանքի տեղավորման Կողմի պետական լեզվով կամ ռուսերենով:

Աշխատանքային պայմանագրի (կոնտրակտի) ավարտից հետո գործատուի կողմից աշխատողի աշխատանքային գրքույկում արվում է համապատասխան գրառում, և տրվում է աշխատավարձի մասին տեղեկանք աշխատած ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա համար:

### **Հոդված 8**

1. Աշխատողների և նրանց ընտանիքների անդամների մեկնումը աշխատանքի տեղավորման Կողմի տարածք, այնտեղ մնալը և այնտեղից մեկնելը կարգավորվում են այդ Կողմի օրենսդրությամբ և համապատասխան միջազգային համաձայնագրերով:

Աշխատողների և նրանց ընտանիքների անդամների մեկնումը աշխատանքի տեղավորման Կողմի տարածք թույլատրվում է միայն այդ Կողմի իրավասու մարմնի պահանջներին համապատասխանող բժշկական տեղեկանքի առկայության դեպքում:

2. Աշխատողների և նրանց ընտանիքների անդամների անձնական իրերի, անհրաժեշտ աշխատանքային գործիքների, սարքավորումների ներմուծումը աշխատանքի տեղավորման Կողմի տարածք, իսկ վերադառնալու դեպքում՝ մեկնման Կողմի տարածք, ինչպես նաև աշխատանքի տեղավորման Կողմի տարածքում աշխատանքային եկամուտների հաշվին ձեռք բերված ապրանքների արտահանումը իրականացվում է Կողմերի մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **Հոդված 9**

1. Աշխատողի աշխատանքային գործունեությունը, որի մասին խոսվում է 3-րդ հոդվածի 1-ին կետում, ձևակերպվում է աշխատանքի տեղավորման Կողմի պետական լեզվով և ռուսերենով՝ գործատուի հետ այդ Կողմի աշխատանքային օրենսդրությանը համապատասխան կնքված աշխատանքային պայմանագրով (կոնտրակտով), որը տրվում է աշխատողին մինչև աշխատանքի մեկնելը:

Աշխատանքային պայմանագրում (կոնտրակտում) պետք է պարունակվեն գործատուի և աշխատողի հիմնական ռեկվիզիտները, աշխատողին ներկայացվող մասնագիտական պահանջները, տեղեկություններ աշխատանքի բնույթի, աշխատանքի պայմանների և դրա վճարման, դրանից կատարվող պահումների, աշխատաժամանակի և հանգստի տևողության, բնակվելու պայմանների և դրա համար վճարելու, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի (կոնտրակտի) գործողության ժամկետի, նրա լուծման պայմանների, ճանապարհային ծախսերը ծածկելու կարգի մասին:

Եթե աշխատանքային պայմանագիրը (կոնտրակտը) լուծվել է ձեռնարկության (հիմնարկության, կազմակերպության) լուծարման, վերակազմավորման կամ վերապրոֆիլավորման, աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման կապակցությամբ, աշխատանքի տեղավորման Կողմի օրենսդրության համաձայն, աշխատողի վրա տարածվում են նշված հիմքերով ազատված աշխատողների համար նախատեսված արտոնությունները և փոխհատուցումները:

Այդ դեպքում աշխատողը ենթակա է վերադարձման մեկնման Կողմի տարածք գործատուի միջոցների հաշվին:

Աշխատողին մշտական բնակության վայրում տրվում է ընդհանուր հիմունքներով աշխատանքի տեղավորման իրավունք: Գործազրկության նպաստը նշանակվում է և վճարվում մեկնման Կողմի օրենսդրությամբ և նրա հաշվին:

2. Աշխատողներն օգտվում են իրավունքներից և կատարում պարտականություններ, որոնք սահմանված են աշխատանքի տեղավորման Կողմի աշխատանքային օրենսդրությամբ:

## **Հոդված 10**

Աշխատողների աշխատանքային եկամուտների հարկումը, որոնց մասին նշվում է 3-րդ հոդվածի 1-ին կետում, իրականացվում է աշխատանքի տեղավորման Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով:

## **Հոդված 11**

Աշխատողների կենսաթոշակային ապահովության հարցերը, որոնց մասին նշվում է 3-րդ հոդվածի 1-ին կետում, կարգավորվում են կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների

մասին 1992թ. մարտի 13-ի Համաձայնագրով և այդ բնագավառում երկկողմ համաձայնագրերով:

## **Հոդված 12**

Սույն Համաձայնագրով՝ դրա 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված աշխատողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը (բացի կենսաթոշակային ապահովությունից) իրականացվում է աշխատանքի տեղավորման Կողմի օրենսդրության հիման վրա:

Սոցիալական ապահովության հետ կապված բոլոր ծախսերը (բացի կենսաթոշակային ապահովությունից) կրում է աշխատանքի տեղավորման Կողմը:

Աշխատողների բժշկական սպասարկումը նույնպես իրականացվում է աշխատանքի տեղավորման Կողմի գործատուի հաշվին և նրա քաղաքացիներին հավասար մակարդակով:

## **Հոդված 13**

Կողմերը պետք է հետևեն աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված կամ առողջությունը քայքայող այլ վնասվածքների հետևանքով աշխատողին հասցված վնասի (կորստի) հատուցման հետևյալ կարգին, որոնց մասին նշված է 3-րդ հոդվածի 1-ին կետում.

ա) աշխատանքային խեղման կամ առողջությանը հասցված այլ վնասվածքի, ինչպես նաև տուժողի մահվան հետևանքով վնասի (կորստի) հատուցումը կատարում է այն Կողմը, որի օրենսդրությունը տարածվում է աշխատողի վրա խեղում ստանալու պահին,

բ) մասնագիտական հիվանդության կամ դրան հետևող մահվան վնասի (կորստի) հատուցումը կատարում է այն Կողմը, որի օրենսդրությունը տարածվում էր աշխատողի վրա նրա աշխատանքային գործունեության ընթացքում, որը մասնագիտական հիվանդության պատճառ էր դարձել, եթե անգամ նշված հիվանդությունն առաջին անգամ բացահայտվել է մյուս Կողմի տարածքում, այն դեպքերում, երբ մասնագիտական հիվանդություններ ստացած աշխատողը երկու պետություններում էլ աշխատում էր այնպիսի պայմաններում և գործունեության բնագավառներում, որոնք կարող էին մասնագիտական հիվանդություններ առաջացնել, վնասի (կորստի) հատուցումն իրականացնում է այն Կողմը, որի տարածքում վերջին անգամ կատարվել է նշված աշխատանքը,

գ) հիվանդության սրման դեպքում մասնագիտական հիվանդության հետևանքով վնասի (կորստի) փոխհատուցումը Կողմերից մեկի կողմից՝ վերանայվում է այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան:

Սակայն այս դրույթը չի կիրառվում, եթե հիվանդության սրումը կապված է մյուս Կողմի ձեռնարկություններում (հիմնարկություններում),

կազմակերպություններում) աշխատանքային գործունեության հետ, ինչը կարող էր առաջացնել մասնագիտական հիվանդություն, և որի ընթացքում աշխատողի նկատմամբ կիրառվել էր մյուս Կողմի օրենսդրությունը:

Գործատուի մեղքով աշխատանքային խեղման կամ առողջությանը հասցված այլ վնասի հետևանքով աշխատունակության կորստի կամ աշխատողի մահվան դեպքում գործատուն վճարում է ճանապարհաձախսը, իսկ հարկ եղած դեպքում՝ ուղեկցողի՝ ուղեկցելու և վերադառնալու ծախսերը:

Աշխատանքի տեղավորման Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տուժողի վերջնական մեկնման դեպքում գործատուն պարտավոր է նրան փոխանցել առողջությանը հասցված վնասը (կորուստը) փոխհատուցող միջոցներ աշխատանքի տեղավորման Կողմի օրենսդրությամբ նախատեսված չափերով:

Գործատուն փոխհատուցում է տուժողի բուժման և վերականգնման փաստացի ծախսերը՝ բուժում և վերականգնում անցկացնող Կողմի սոցիալական ապահովության և առողջապահության պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից ներկայացված ակտերի (հաշիվների) համաձայն:

Եթե լուծարված ձեռնարկության իրավունքները և պարտականությունները չեն փոխանցվում իրավահաջորդին, նա պարտավոր է կապիտալավորել և այս վճարումները ֆինանսավորող մյուս Կողմի մարմիններ մուծել վնասի (կորստի) հատուցման համար նախատեսված գումարները:

Սույն հոդվածի գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, որոնք առաջացել են մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

#### **Հոդված 14**

Աշխատողի մահվան դեպքում գործատուն կազմակերպում է մահացողի մարմնի և անձնական գույքի փոխադրումը մեկնման Կողմի տարածք, կրում է դրա հետ կապված բոլոր ծախսերը և տեղեկացնում է այդ Կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը՝ նրանց տրամադրելով մահվան փաստի վերաբերյալ նյութեր:

#### **Հոդված 15**

Աշխատողները կարող են իրականացնել աշխատած միջոցների փոխանցում մեկնման Կողմի տարածք՝ աշխատանքի տեղավորման Կողմի օրենսդրության համաձայն և հաշվի առնելով այս հարցերը կարգավորող հատուկ համաձայնագրերը:

#### **Հոդված 16**

Լիազոր մարմինները միմյանց տեղեկացնում են՝ աշխատանքի, զբաղվածության, արտագաղթի և ներգաղթի բնագավառում ազգային օրենսդրության և այլ նորմատիվ ակտերի, այդ թվում նաև աշխատողների կյանքի պայմանների մասին,

կողմերի աշխատաշուկաների վիճակի մասին:

Լիազոր մարմինները նախաձեռնում են անհրաժեշտ միջոցառումներ միջնորդների միջոցով աշխատողների աշխատանքի տեղավորումը կանխելու նպատակով, որոնք չունեն մեկնման Կողմի իրավասու մարմինների՝ նման գործողություններ կատարելու համապատասխան թույլտվություն:

### **Հոդված 17**

Կողմերից մեկի տարածքում բնակվող յուրաքանչյուր անձ անմիջականորեն կամ բնակության վայրի իրավասու մարմնի միջոցով կարող է դիմել մյուս Կողմի իրավասու մարմնին:

Կողմերից մեկը մյուս Կողմի իրավասու մարմինների հարցումների հիման վրա ներկայացնում է այն փաստաթղթերը և արխիվային նյութերը, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրից բխող հարցերի լուծման համար:

### **Հոդված 18**

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է հաստատման Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, ինչը հաստատվում է հայտագրերի փոխանակման միջոցով և ուժի մեջ է մտնում վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով:

Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, եթե Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն 6 ամիս առաջ Կողմերից ոչ մեկը գրավոր ծանուցման միջոցով մյուս Կողմին տեղյակ չպահի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում դրա դրույթներն ուժի մեջ են մնում գործատուների հետ աշխատողների կնքած աշխատանքային պայմանագրերի (կոնտրակտների) նկատմամբ մինչև պայմանագրերի ժամկետների ավարտը:

3. Սույն Համաձայնագրի դրույթները կարող են փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որը ձևակերպվում է այդ Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող համապատասխան արձանագրություններով:

Կատարված է Կիև քաղաքում 1995 թվականի հունիսի 17-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն

Էլ հավասարագոր են: Տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում հիմք է ընդունվում ռուսերեն տեքստը:

*Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի մարտի 12-ին:*